Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/52936/02/22

# ՎՃԻՌ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

09 հունվարի 2023թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի
առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը

նախագահությամբ՝ դատավոր Արամ Մկրտչյանի
քարտուղարությամբ՝ Հասմիկ Իգիթյանի
մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչներ Անետա Սարգսյանի
Արման Մակինյանի
Պատասխանող ՀՀ ԱՆ ներկայացուցիչ Գոհար Ղուկասյանի
Պատասխանող ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/8 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ներկայացուցիչ Մարինե Հարությունյանի
երրորդ անձի ներկայացուցիչ Հասմիկ Ենգոյանի

դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Թեոֆարմա իմպորտ» ՍՊ ընկերության /պետական գրանցման համար 278.110.934511, ք.Երևան, Տիգրան Մեծի պողոտա 23/1/ ընդդեմ ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության /ք.Երևան, կառավարական տուն 3/, ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/8 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /ք.Երևան, կառավարական տուն 3/, երրորդ անձ՝ «Մ.Լ.Ն.Ֆարմ» ՍՊ ընկերություն /ՀՎՀՀ 02567316, ք.Երևան, Սարյան 24/՝ գնահատող հանձնաժողովի արձանագրության կետերի որոշումներն անվավեր ճանաչելու, հայցվորին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքել պարտավորեցնելու, ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/8 ծածկագրով ընթացակարգի արդյունքում կայացված «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊ ընկերության հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը և «Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/8 -1» պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջների մասին,

## ՎՃՌԵՑ

1. «Թեոֆարմա իմպորտ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/8 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի, երրորդ անձ՝ «Մ.Լ.Ն.Ֆարմ» ՍՊ ընկերություն՝ գնահատող հանձնաժողովի արձանագրության կետերի որոշումներն անվավեր ճանաչելու, հայցվորին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքել պարտավորեցնելու, ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/8 ծածկագրով ընթացակարգի արդյունքում

կայացված «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊ ընկերության հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը եւ «Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/8 -1» պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջների մասին,բավարարել մասնակի.

անվավեր ճանաչել ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/8 ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային աճուրդով 2023-2025 թվականի կարիքների համար ձեռք բերվող դեղերի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022թ. հոկտեմբերի 7-ի թիվ 3 արձանագրության 3-րդ եւ 4-րդ կետերի որոշումները,

անվավեր ճանաչել ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/8 ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային աճուրդով 2023-2025 թվականի կարիքների համար ձեռք բերվող դեղերի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022թ. հոկտեմբերի 7-ի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի որոշումը՝ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու եւ մերժելու մասով:

պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը եւ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/8 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին ընդունել որոշում «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերությանը 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու եւ այդ մասով պայմանագիր կնքելու մասին:

**2.** Հայցը մնացած պահանջների մասով մերժել:

**3.** ՀՀ առողջապահության նախարարությունից հօգուտ «Թեոֆարմա իմպորտ» ՍՊ ընկերության բռնագանձել 6000000 /վեց միլիոն/ ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված, բավարարված հայցապահանջներին համապատասխան պետական տուրքի գումար:

**4.** Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

**5.** Վճիռը կամովին չկատարելու դեպքում,այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝պարտապանի հաշվին:

Digitally signed by MKRTCHYAN ARAM 1712720074

**ԴԱՏԱՎՈՐ** **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

**<u>Ծանոթություն</u>**: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ « » ____________________ 202___թ.:

**ԴԱՏԱՎՈՐ** **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**